ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/9-2

ք. Երևան «09» 09 2019թ.

ՀՀ Արդարադատության նախարարությունն, ի դեմս՝ **գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Արտակ Ասատրյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **<Էյչ գրուպ> ՍՊԸ-ն**, ի դեմս ընկերության տնօրեն **Կ.Հարությունյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 (տաս) աշխատանքային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 (տաս) աշխատանքային օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով,՝ լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **7088100 (յոթ միլիոն ութսունութ հազար հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին: Մատակարարված ապրանքների երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին՝ Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում /առավելագույնը 10 օրացուցային օր/ վերացնել թերությունները.

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն	**<Էյչ գրուպ> ՍՊԸ**
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	**Ք. .Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30**
ՀՀ ֆինանսների նախարարության	**<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ**
գործառնական վարչություն	**Հ/Հ 25000104887601 00**
Հ/Հ՝ 900011018554	**ՀՎՀՀ 01254973**
ՀՎՀՀ 02506264	
Ս.Ստեփանյան	Կ.Հարությունյան

Հավելված 1
«09» 09 2019թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/9-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Անվանումը և ապրանքային նշանը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ենթակա քանակը	հասցեն	Ժամկետը**
2	2 լազերային տպիչներ, **HP LaserJet Pro M404N**	30232 110/2	**ՉԺՀ, Ֆիլիպիններ, Վիետնամ, HP Inc.**	Տպիչ լազերային **HP LaserJet Pro M404N**, երկկողմ տպագրության: Սև-սպիտակ տպագրության արագությունը՝ առնվազն 38 էջ/ր/-+10%, սև-սպիտակ տպագրության որակը՝ առնվազն 1200 x 1200 dpi/-+10%, ամսական առավելագույն թույլատրելի աշխատունակությունը/A4 չափսի թուղթ/ ՝ առնվազն 80000 էջ/-+10%, պրոցեսորի արագագործությունը՝ առնվազն 1200 ՄՀց/-+10%, տպելու թույլատրելի ֆորմատները՝ առնվազն PCL5, PCL6, PS, PCLm, PDF, URF, PWG	հատ	**142200**	**995400**	7	7	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.

				ֆորմատներով: Երկկողմանի տպագրության հնարավորության պարտադիր առկայություն:Մոբայլ տպելու հնարավորության առկայություն, Wi-Fi Direct տպելու հնարավորություն, AirPrint 1.5 տպելու հնարավորություն, Google Cloud Print™ 2.0 հնարավորություն, առնվազն 1 հատ բարձր արագությամբ USB 2.0 միակցիչ, Ethernet 10/100/1000T ցանցային միակցիչի առկայություն, անլար միացման հնարավորություն: Համատեղելի օպերացիոն համակարգեր՝ առնվազն Windows®: 10, 8.1, 8, 7: Ստանդարտ հիշողությունը՝ առնվազն 256 ՄԲայթ: Ելքի թղթային դարակի առկայություն՝ առնվազն 150 թերթ՝ 80գ/քմ հաստությամբ թղթի: Մուտքի թղթային դարակի առկայություն՝ առնվազն 500 թերթ՝ 80գ/քմ հաստությամբ թղթի: Ստանդարտ տպվող թղթի չափերը՝ առնվազն A4; A5; A6; A5-R չափերի, ոչ ստանդարտ տպվող թղթի չափերը՝ սկսած 76 x 127մմ-ից մինչև 215 x 355 մմ/-+10%: Թույլատրելի օգտագործվող թղթի տեսակները՝ թուղթ՝ լազերային, ֆոտո, կոշտ տպագրության, ծրարներ, կպչուն թուղթ, փոստային բացիկներ: Օգտագործվող թղթի հաստությունը՝ 60-ից 160 գ/քմ/-+10%: Թույլատրելի մուտքային հոսանք՝ 220-240Վ/-+10%/, 50/60 Հց: Պահանջվող առավելագույն էլեկտրական							

				հզորությունը՝ 600 Վտ/-+10%, հոսանքի միացման կաբելի առկայություն, USB կաբելի առկայություն: Անվճար երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի:							
3	3 համակարգչային կոնֆիգուրացիա/պրոեկտոր/, **Vivitek DW814**	30211 150/1	**ՃԺՀ, Թայվան, Vivitek**	Թվային Պրոյեկտոր **Vivitek DW814** Կետերի բազային խտությունը՝ առնվազն WXGA 1280 x 800 կամ համարժեք: Պայծառությունը՝ առնվազն 3800 ANSI Lumens/-+10% կամ համարժեք: Կոնտրաստը՝ առնվազն 15,000:1/-+10% կամ համարժեք: Կետերի առավելագույն խտությունը՝ WUXGA ռեժիմում առնվազն 1920 x 1200 @60Հց կամ համարժեք: Կողմերի հարաբերակցությունը՝ 16:10: Լամպի կյանքի տևողությունը և տեսակը՝ առնվազն 3,500/5,000/7,000 ժամ/-+10% (Normal/Eco. Ռեժիմում / Dynamic Eco ռեժիմում): Դիսփլեյի տեսակը՝ DMD կամ համարժեք: Պատկերի չափսերը անկյունագծով՝ 30.2 դյույմ - 302.3 դյույմ/-+10% Էկրանի հեռավորությունը պրոյեկտորից՝ 1մ – 10մ/-+10% Պրոյեկտորի օբյեկտիվը՝ F2.5 - 2.72 , f=17.81մմ - 21.35մմ/-+10%, Զում՝ 1.2x/-+10% Մուտքի/Ելքի միացման պորտերի առկայությունը՝ առնվազն 2 հատ VGA-In 15pin D-Sub, S-Video,	հատ	**540000**	**540000**	1	1	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.

				HDMI v1.4b, Composite Video, 3 հատ Audio-In Mini-Jack, VGA-Out 15pin D-Sub, RJ45, 12v Trigger, RS-232, USB A (առնվազն 1 հատ սնուցման համար), USB miniB (առնվազն 1 հատ սպասարկման համար), Microphone (Mini-Jack) Վիդեո համատեղելի ստանդարտները՝ առնվազն SDTV (480i, 576i) / EDTV (480p, 576p) / HDTV (720p, 1080i, 1080p), NTSC (M, 3.58/4.43 MHz), PAL (B,D,G,H,I,M,N) SECAM (B,D,G,K,K1,L) Աղմուկի առավելագույն մակարդակը՝ 36դԲ/32դԲ/-+10% (Normal/Eco. ռեժիմներում) Բարձրախոսներ՝ ներկառուցված, առնվազն 10Վտ հզորությամբ Ստանդարտ կոմպլեկտավորման բաղադրությունը՝ VGA Cable, User Manual (CD), Quick Start Guide, Remote Controller (with battery) Սնուցումը՝ Փոփոխական հոսանք AC 100-240Վ/-+10%, 50/60Հg Հոսանքի ծախսը՝ առավելագույնը 320Վտ/260Վտ/-+10% (Normal/Eco ռեժիմներում), առավելագույնը 0.5Վ քնած ռեժիմում Ուղեկցող պարամետրերը՝ Offset 111.3% (+/- 5%), Keystone Correction +/- 40 աստիճան, 3D Ready (DLP link, PC+Video) Ֆիզիկական պարամետրերը՝ չափսերը (Լ x Խ x Բ) = 314մմ x 216մմ x 126մմ/-+10%, քաշը՝							

				առավելագույնը 3100գ./-+10% Անվճար երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի պրոյեկտոր / 1 տարի կամ 1000 ժամ լամպին՝ որը առաջինը կլրանա:							
4	4 գրանշանների օպտիկական ճանաչման սարքեր, **Wacom STU-430**	30216 120/2	**ՁԺՀ, Wacom Co. Ltd.**	Թվային էլեկտրոնային գրիչ վահանակով **Wacom STU-430**, ստորագրությունների թվայնացման համար: Սարքը պետք է բաղկացած լինի թվային գրչից և թվային վահանակից: Վահանակի վրա պետք է առկա լինի մոնոխրոմ LCD դիսպլեյ, որի վրա թվային գրիչով կկատարվի ստորագրման պրոցեսսը, որն էլ իր հերթին գրաֆիկական տեսքով կարտացոլվի վահանակի էկրանին: Վահանակի չափսերը չպետք է գերազանցեն 161մմx174մմx11մմ/-+10%, իսկ էկրանի անկյունագիծը պետք է լինի ոչ պակաս 4.5 դյույմից/-+10% և էկրանի չափսերը չպետք է գերազանցեն 96մմ x 60մմ/-+10%: Էկրանի կետերի խտությունը՝ նվազագույնը 320 x 200 dpi/-+10%: Վահանակը պետք է ունենա USB միացման պորտ և համատեղելի լինի Windows XP/7/8/10 օպերացիոն համակարգերի հետ: Թվային/էլեկտրոնային ստորագրության համար մատակարար ընկերությունը պետք է տրամադրի հասանելիություն C++, .Net և Java SDK/API ծրագրային հենքերին, որը հնարավորություն կտա ծրագրավորող անձնակազմին ստեղծել ծրագրային	հատ	**79500**	**397500**	5	5	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.

				ապահովում և սարքավորումները ինտեգրել գործող համակարգին: Թվային ստորագրությունն իրականին առավել նման ստանալու նպատակով թվային գրիչի գլխիկը պետք է ունենա ճնշման զգայնության առնվազն 1024 աստիճան, իսկ սենսորի խտությունը՝ ոչ պակաս 2540lpi: Վահանակի սնուցումը պետք է իրականացվի USB լարի միջոցով, առանց սնուցման սարքի: Գրիչը պետք է աշխատի առանց մարտկոցների և այն չպետք է ունենա լարային միացում: Անվճար երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի:							
5	5 լազերայ ին տպիչնե ր, **HP LaserJet Pro M203dn**	30232 110/3	**ՀԺՀ, Ֆիլիպ իններ, Վիետ նամ, HP Inc.**	Տպիչ լազերային տպագրության **HP LaserJet Pro M203dn**: Սև-սպիտակ տպագրության արագությունը՝ առնվազն 28 էջ/ր/-+10%, սև-սպիտակ տպագրության որակը՝ առնվազն 1200 x 1200 dpi/-+10%, ամսական առավելագույն թույլատրելի աշխատունակությունը/A4 չափսի թուղթ/ ՝ առնվազն 30000 էջ/-+10%, պրոցեսսորի արագագործությունը՝ առնվազն 800 ՄՀg/-+10%, տպելու թույլատրելի ֆորմատները՝ առնվազն PCL5c, PCL6, PS, PCLm, PDF, URF, PWG ֆորմատներով: Մոբայլ տպելու հնարավորության առկայություն, Wi-Fi Direct տպելու հնարավորություն, AirPrint 1.5 տպելու հնարավորություն, Google Cloud Print™ 2.0 հնարավորություն, առնվազն 1 հատ բարձր	հատ	**99600**	**1195200**	12	12	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.

				արագությամբ USB 2.0 միակցիչ, Ethernet 10/100 ցանցային միակցիչի առկայություն, անլար միացման հնարավորություն: Համատեղելի օպերացիոն համակարգեր՝ առնվազն Windows®: 10, 8.1, 8, 7: Ստանդարտ հիշողությունը՝ առնվազն 256 ՄԲայթ: Ելքի թղթային դարակի առկայություն: Մուտքի թղթային դարակի առկայություն՝ առնվազն 150 թերթ/-+10%՝ 80գ/քմ հաստությամբ թղթի, առաջնահերթ մուտքի թղթային դարակի առկայություն՝ առնվազն 10 թերթ՝ 80գ/քմ հաստությամբ թղթի, ստանդարտ տպվող թղթի չափսերը՝ առնվազն A4; A5; A6; B5 (JIS) չափսերի, ոչ ստանդարտ տպվող թղթի չափսերը՝ սկսած 76 x 127մմ-ից/-+10% մինչև 216 x 356մմ/-+10%: Թույլատրելի օգտագործվող թղթի տեսակները՝ թուղթ՝ լազերային, ֆոտո, կոշտ տպագրության, ծրարներ, կպչուն թուղթ, փոստային բացիկներ: Օգտագործվող թղթի հաստությունը՝ 60-ից 160գ/քմ/-+10%: Թույլատրելի մուտքային հոսանք՝ 220-240Վ/-+10%/, 50/60 Հg: Պահանջվող առավելագույն էլեկտրական հզորությունը՝ 500 Վտ/-+10%, հոսանքի միացման կաբելի առկայություն, USB կաբելի առկայություն: Անվճար երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի:							

7	7 սկաներներ համակարգիչների համար, **Xerox Documate 3220**	30216 110/2	**ՁԺՀ, Xerox**	Սկաներներ համակարգիչների համար **Xerox Documate 3220**: Սարքի տեսակը-Պլանշետային գունավոր, օրիգինալի ավտոմատ սնուցող սարքով. Առանձնահատկությունները՝ սովորական սկանավորում, երկկողմանի սկանավորում՝ մեկ անցնումով. Սենսորի տեսակը- LED մատրիցա. Ֆոնի գույնը - Սեւ. Օպտիկայի խտություն - Ոչ պակաս 600 dpi. Գույնի խորությունը - 24-bit գունավոր, 8-bit մոխրագույնի ստվեր, 1-bit մոնո. Սկանի արագությունը, միակողմանի ռեժիմում - Մոնո ՝առնվազն 23 էջ մեկ րոպեում՝ 200 dpi. Մոնո ՝առնվազն 23 էջ մեկ րոպեում՝ 200 dpi: Գունավոր՝ առնվազն 13 էջ մեկ րոպեում՝ 150 dpi Սկանի արագությունը, երկկողմանի ռեժիմում - Գունավոր՝ մեկ րոպեի ընթացքում առնվազն 46 նկար՝ 200 dpi Գունավոր՝ մեկ րոպեում առնվազն 26 նկար՝ 150 dpi Մեկ կոճակով սկանավորում (One Touch) - Ոչ պակաս 99 ծրագրավորվող ուղղություն. Ավտոմատ սնուցող սարքի տարողությունը (75 գ/մ2) - ոչ պակաս, քան 60 թերթ/-+10%: Ձեւաչափի առավելագույն չափը (ապակե կրիչից)՝ - ոչ պակաս, քան 216 x 299 մմ/-+10%. Ձեւաչափի առավելագույն չափը (ավտոմատ սնուցող սարքից) -ոչ պակաս, քան 222 x 965 մմ/-+10%: Ձեւաչափի	հատ	**330000**	**3960000**	12	12	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.

				ամենափոքր չափը (ավտոմատ սնուցող սարքից)՝- Ոչ ավելի, քան 89 x 89 մմ/-+10%: Կրիչի խտությունը (ավտոմատ սնուցող սարքից)՝ - 60 - 105 գ/մ²/-+10%: Աջակցող OS - Առնվազն՝ Windows® 7 / Windows 8 / Vista® / XP® /MacOs . Ինտերֆեյսներ, որպես ստանդարտ - Առնվազն՝ USB 2.0 համատեղելի USB 1.1. Ծրագրային ապահովում - Kofax VRS Basic/Professional, Nuance OmniPage Pro, Nuance PaperPort, Nuance PDF Converter, Visioneer OneTouch, Visioneer Acuity. Ծրագրային ապահովման առանձնահատկությունները՝ ավտոմատ կտրում ըստ բնօրինակի, լաքաների հեռացում, պատկերի հավասարեցում, եզրերի մաքրում ֆոնի հավասարեցում, պատկերը ավտոշրջում, գույները ինքնահայտնաբերում (Գույն / ստվերներով մոխրագույն /մոնո), Հեռացնել դատարկ էջերը, ձեռքով պատկերի շրջում (90°, 180°, 270°), Գույնի բացառում (R/G/B/Custom), հայելային արտապատկերում: Առավելագույն օրվա ծանրաբեռնվածությունը - Առնվազն՝ 2000 էջ/-+10%: Սարքի քաշը-Ոչ ավելի, քան 4.6 կգ/-+10%: Սարքի չափերը՝ - Յուրաքանչյուր փոփոխության մեջ ոչ ավելի, քան 453 x 330 x 139 մմ/-+10%, USB մալուխի առկայությունը կոմպլեկտում - պարտադիր: Անվճար երաշխիքային							

				սպասարկում՝ առնվազն 1 տարի:							

ԳՆՈՐԴ

ՀՀ արդարադատության նախարարություն
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011018554
ՀՎՀՀ՝ 02506264

Ա.Ասատրյան
/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

<Էյչ գրուպ> ՍՊԸ
Ք. .Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010488760100
ՀՎՀՀ 01254973

Հ.Հարությունյան
/ստորագրություն/

Հավելված
«29» 29 2019թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/9-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	2 լազերային տպիչներ, **HP LaserJet Pro M404N**	30232110/2	-	-	-	-	-	-	-	**995400**	**995400**	**995400**	**995400**	**995400**	**995400**
3	3 համակարգչային կոնֆիգուրացիա/պրոեկտոր/, **Vivitek DW814**	30211150/1	-	-	-	-	-	-	-	**540000**	**540000**	**540000**	**540000**	**540000**	**540000**
4	4 գրանշանների օպտիկական ճանաչման սարքեր, **Wacom STU-430**	30216120/2	-	-	-	-	-	-	-	**397500**	**397500**	**397500**	**397500**	**397500**	**397500**
5	5 լազերային տպիչներ, **HP LaserJet Pro M203dn**	30232110/3	-	-	-	-	-	-	-	**1195200**	**1195200**	**1195200**	**1195200**	**1195200**	**1195200**

7	7 սկաներներ համակարգիչների համար, **Xerox Documate 3220**	30216110/2	'	'	'	'	'	'	'	3960000	3960000	3960000	3960000	3960000	3960000
Ընդամենը՝			'	'	'	'	'	'	'	7088100	7088100	7088100	7088100	7088100	7088100

ԳՆՈՐԴ

ՀՀ արդարադատության նախարարություն Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011018554
ՀՎՀՀ՝ 02506264

Ա.Ասատրյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<Էյչ գրուպ> ՍՊԸ
Ք. .Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010488760100
ՀՎՀՀ 01254973

Ա.Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/9-2

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «09» 09 **2019թ.**

<Էյչ գրուպ> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն **Կ.Հարությունյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է **ՀՀ արդարադատության նախարարության** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված **ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/9** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.1 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.3 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.4 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.5 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<Էյչ գրուպ> ՍՊԸ
Ք. .Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010488760100
ՀՎՀՀ 01254973

Կ.Հարությունյան
/ստորագրություն/

Կ.Տ.

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[2]

2. Թիվ **ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/9-2**

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն)՝ **<<Էյչ Գրուպ>> ՍՊԸ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **2500010488760100**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **01254973**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը՝ **ՀՀ արդարադատության նախարարություն**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02506264**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ կենտրոնական գանձապետարան**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900005000758**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **708810 (յոթ հարյուր ութ հազար ութ հարյուր տասը)**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ, AMD**

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովման համար*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ ակցեպտավորված վճարում

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[2] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*